Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի ԹԻՎ 57, ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի ԹԻՎ 58, ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի ԹԻՎ 59, ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի ԹԻՎ ԹԻՎ 60-64, ՓԵՏՐՎԱՐԻ 16-Ի ԹԻՎ 65, ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի ԹԻՎ ԹԻՎ 66, 67, ՓԵՏՐՎԱՐԻ 21-Ի ԹԻՎ ԹԻՎ 68, 69 և ՓԵՏՐՎԱՐԻ 23-Ի ԹԻՎ 70 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 57-70 որոշումների հերթական համարից անմիջապես հետո անհրաժեշտ է նշում կատարել իրավական ակտի բնույթի մասին, համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի:

Թիվ 57 որոշման 2-րդ կետը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին:

Թիվ թիվ 58, 65, 66, 67, և 69 որոշումների դրույթներումում անհրաժեշտ է գրառել անշարժ գույքերի անվանումները, համաձայն ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 2-րդ կետի 7-րդ ենթակետի:

Թիվ 59 որոշման վերնագրում և բովանդակությունում անհրաժեշտ է գրառել ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի դեկտեմբերի 8-ի թիվ 438 որոշման ընդունման տարեթիվը:

Բացի այդ, որոշման նախաբանում Շիրակի մարզի բառերից հետո գրառված Անի համայնքապետարանի բառերն անհրաժեշտ է փոխարինել Անիի համայնքապետարանի աշխատակազմի բառերով:

Համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատարի և գնումները համակարգող մասնագետի անուններն անհրաժեշտ է գրառել լրիվությամբ (հիմք՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մաս):

Թիվ թիվ 60, 61, 63 և 64 որոշումներում անհրաժեշտ է հղում կատարել նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի դրույթներին:

Թիվ 62 որոշումը չի համապատասխանում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 43-րդ հոդվածի դրույթներին, համաձայն որի օգնական նշանակվում է **չափահաս** գործունակ քաղաքացիների նկատմամբ: Բացի այդ, որոշման 2-րդ կետը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջին:

Թիվ 68 որոշման 2-րդ կետը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջին:

Կատարող՝ Շանթ Շաքարյանց
21.03.2022թ.